«ՖԵՐՈ ԳՐՈՒՊ ԳՈԼԴ» ՍՊԸ
«ФЕРО ГРУП ГОЛД» ООО «FERO GROUP GOLD» LLC

+374 93 860339 Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Տիգրան Մեծի 29ա, բն. 3 artak78@yandex.ru
Адрес: РА, г. Ереван, Тигран Мец 29а, кв. 3: Address: Tigran Mets 29a, apt. 3, Yerevan, RA.

«20» 02 2023 № 02

ՀՀ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՊԱՐՈՆ ՀԱԿՈԲ ՍԻՄԻԴՅԱՆԻՆ

ՀԱՐԳԵԼԻ ՊԱՐՈՆ ՆԱԽԱՐԱՐ,

Տեղեկացնում եմ, որ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 17.08.2022թ. թիվ 2476-Ա հրամանով «ՖԵՐՈ ԳՐՈՒՊ ԳՈԼԴ» ՍՊԸ-ին տրամադրվել է ՀՀ Արագածոտնի մարզի Թուխմանուկի ոսկու հանքավայրի Հարավ-արևելյան «Վլադ» տեղամասում օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության թիվ ԵԹՀ-29/355 թույլտվությունը (լիցենզիա), որի հիմքով «ՖԵՐՈ ԳՐՈՒՊ ԳՈԼԴ» ՍՊԸ և ՏԿԵՆ միջև 17.08.2022թ. կնքվել օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության թիվ Պ-355 ընդերքօգտագործման պայմանագիր:

Երկրաբանական աշխատանքերն օրենսդրության պահանջներին համապատասխան իրականացնելու նպատակով, հիմք ընդունելով ՀՀ հողային օրենսգրքի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի, ինչպես նաև ՀՀ կառավարության 2001թ. ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի պահանջները, Ընկերությունը 2022թ. օգոստոսին գրավոր դիմել է ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքին՝ ընդերքի երկրաբանական ուսումնասիրությանթիվ ԵԹՀ-29/355 թույլտվությամբ սահմանված կոորդինատներով համայնքային նշանակության

հողամասը սերվիտուտի պայմանագրով «ՖԵՐՈ ԳՐՈՒՊ ԳՈԼԴ» ՍՊԸ-ին տրամադրելու խնդրանքով:

Ապարան համայնքի կողմից իրականացված ուսումնասիրությամբ պարզվել է, որ ԵԹՀ-29/355 թույլտվությամբ սահմանված կոորդիտաներով ծանրաբեռնված 67.5 հա մակերեսով հողամասի 36.06225 հա հանդիսանում է համայնքային, իսկ 30.93775 հա պետական սեփականություն:

Հիմք ընդունելով Ապարան համայնքի ղեկավարի 29.11.2022թ. թիվ 916-Ա որոշումը, 09.12.2022թ. համայնքի և Ընկերության միջև կնքվել է համայնքային նշանակության՝ 36.06225 հա մակերեսով հողամասի վարձակալության պայմանագիր՝ ընդերքի երկրաբանական ուսումնասիրություն իրականացնելու նպատակով, ինչը սահմանված կարգով գրանցվել է կադաստրի կոմիտեում:

Ինչ վերաբերում է 30.93775 հա մակերեսով պետական սեփականություն հանդիսացող հողամասին, ապա ընդերքի երկրաբանական ուսումնասիրություն իրականացնելու նպատակով այն ևս «ՖԵՐՈ ԳՐՈՒՊ ԳՈԼԴ» ՍՊԸ-ին տրամադրելու նպատակով համայնքի կողմից կազմվել է հողաշինական գործ և ներկայացվել միջգերատեսչական հանձնաժողովին, որի գործընթացը դեռևս չի ավարտվել:

Հետևաբար, նկատի ունենալով, որ օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերով դեռևս չի ավարտվել ԵԹՀ-29/355 թույլտվությամբ ընդգրկված կոորդինատներով հողամասն ամբողջությամբ Ընկերությանը տրամադրելու գործընթացը և, որ Ընկերությունը դաշտային աշխատանքներ կատարելու իրավունք դեռևս չունի, այդ պատճառով հաստատված ժամանակացույցով նախատեսված աշխատանքները կկատարվեն ժամանակացույցում փոփոխություններից հետո, ուստի ՀՀ Կառավարության 22.02.2018թ. թիվ 191-Ն Որոշման հավելվածով հաստատված՝ ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով կատարվող մշտադիտարկումների արդյունքների վերաբերյալ կից ներկայացվող հաշվետվությունը զրոյական է:

ՀԱՐԳԱՆՔՈՎ

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ՝ ԱՐՏԱԿ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ձև N 2

ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎ

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԱՄՓՈՓ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ

| Մշտադիտարկումների օբյեկտը | Մշտադիտարկումների վայրը | Ցուցանիշը | Մշտադիտար-կումների տեսակը | Հաճախականությունը | Արդյունքը |
|---|---|---|---|---|---|
| Մակերևութային ջրեր | - | | | | |
| Ստորգետնյա ջրեր | - | | | | |
| Մթնոլորտային օդ | - | | | | |
| Հողային ծածկույթ | - | | | | |
| Վայրի բնություն, կենսամիջավայր, կարմիր գրքում ընդգրկված, էնդեմիկ տեսակներ | - | | | | |
| Աղմուկ և թրթռում | - | | | | |
| Ոչ վտանգավոր թափոններ | - | | | | |
| Վառելանյութերի պահեստարաններ | - | | | | |
| Ցիանային լուծույթների օգտագործման հետ կապված ենթակառուցվածքներ | - | | | | |

Տեղեկատվությունը ներկայացրեց «ՖԵՐՈ ԳՐՈՒՊ ԳՈԼԴ» ՍՊԸ

ՀՀ ք. Երևան, Տիգրան Մեծի 29ա, բն. 3, հեռ.+374 93860339, artak78@yandex.com

(գտնվելու և գործունեության իրականացման վայրը, հեռախոսահամարը, կայքը, էլեկտրոնային հասցեն՝ առկայության դեպքում)

Ղեկավար տնօրեն Արտակ Ղուկասյան (պաշտոնը, անունը, ազգանունը) 20.02.2023 (ստորագրությունը, ամիսը, ամսաթիվը, տարեթիվը)

«ՖԵՐՈ ԳՐՈՒՊ ԳՈԼԴ» "FERO GROUP GOLD" "ФЕРО ГРУП ГОЛД" 00503585